ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 24.10.2023թ., ժամը 12-30-ին ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գագիկ Իգիթյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարեգին Ղարիբյանը, Սուրեն Մուշեղյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

Օրակարգ

Աճուրդի արդյունքների անփոփում և գնահատում

1. Աճուրդի մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները.

1. «Արպանիվ» ՍՊԸ /ք. Երևան, Նար-Դոսի 122/
2. «Ավտոշեմ » ՍՊԸ /ք. Երևան, Նար-Դոսի 118/

2. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1. «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից համակարգ ներմուծված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, ապրանքի տեխնիկական բնութագիրը բավարարում է հրավերի պահանջներին:

3.2. «Ավտոշեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին, դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ 1-ին կետում «և իրեն փոխկապակցված անձինք» բառերը բացակայում են, և տեխնիկական բնութագիրը հստակ չէ ներկայացված:

4. Հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների առաջարկած գները և նախահաշվային գինը

չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը
1	ավտոմեքենաների անիվներ
2	ավտոմեքենաների անիվներ

3	ավտոմեքենաների անիվներ						
4	ավտոմեքենաների անիվներ						
Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	Արպանիվ ՍՊԸ	240000 AMD	199333 AMD	20%	239199.60 AMD	-
1	2	Ավտոշեմ ՍՊԸ	240000 AMD	206666 AMD	20%	247999.20 AMD	Մերժված
2	1	Արպանիվ ՍՊԸ	156000 AMD	129500 AMD	20%	155400.00 AMD	-
2	2	Ավտոշեմ ՍՊԸ	156000 AMD	130000 AMD	20%	156000.00 AMD	-
3	1	Արպանիվ ՍՊԸ	92000 AMD	67500 AMD	20%	81000.00 AMD	-
3	2	Ավտոշեմ ՍՊԸ	92000 AMD	68333 AMD	20%	81999.60 AMD	-
4	1	Ավտոշեմ ՍՊԸ	70000 AMD	55000 AMD	20%	66000.00 AMD	-

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

5.1 Հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5.2 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 10:30-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Քարտուղարին՝

Eauction.armeps.am համակարգի միջոցով այսօր տեղեկացնել «Ավտոշեմ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների վերաբերյալ և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գագիկ Իգիթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարեգին Ղարիբյան

_____ Սուրեն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/43» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.10.2023թ., ժամը 10-30-ին ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գագիկ Իգիթյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարեգին Ղարիբյանը, Սուրեն Մուշեղյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ

«Ավտոշեմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի՝
   1, 2, 3 չափաբաժինների համար «Արպանիվ» ՍՊԸ-ի
   հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:
2. «Ավտոշեմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի համաձայն:
3. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 4-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:
4. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն 1-3 չափաբաժինների համար հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գագիկ Իգիթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարեգին Ղարիբյան

_____ Սուրեն Մուշեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան